Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 3-ի նիստի N 33
արձանագրային որոշման

ԲԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Բերքի գնման
պայմանագիր N ----------

---------- ----------
(կնքման վայրը) (օր, ամիս, տարի)

«.....» -ը, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ---------- -ի, որը գործում է/ հանդես է գալիս ---------- (կազմակերպության անվանումը /անձի անուն ազգանունը), (կանոնադրություն /լիազորագիր/իր անունից) հիման վրա, մի կողմից, և
«.....»-ը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ---------- -ի, որը գործում է/ հանդես է գալիս ---------- (կազմակերպության անվանումը /անձի անուն ազգանունը), (կանոնադրություն /լիազորագիր/ իր անունից) հիման վրա մյուս կողմից, Գնորդը և Վաճառողը միասին այսուհետ՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1. Վաճառողը պարտավորվում է 201 թ.-ին (201 – 201 թ-ներին) աճեցված բերքը (այսուհետ՝ «Ապրանք») սույն պայմանագրով սահմանված ժամկետներում, քանակությամբ, գնով և այլ պայմաններով վաճառել Գնորդին, իսկ Գնորդը պարտավորվում է գնել այն:

2. Այն դեպքում, եթե սույն պայմանագրի 3-րդ կետում նշված հողատարածքը գտնվում է համատեղ սեփականության ներքո, սույն պայմանագիրը կարող է կնքել համասեփականատերերից յուրաքանչյուրը՝ մյուս համասեփականատերերի գրավոր համաձայնության հիման վրա:

2. Ապրանքի որակին և քանակին ներկայացվող պահանջները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3. Ապրանքը գնվելու է բացառապես Վաճառողի կողմից մշակվող և սույն կետում նշված հողատարածքից ստացված բերքից, որը հավաստվում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից գյուղատնտեսական (խաղողագործական, պտղաբուծական, բանջարաբուծական արտադրության) գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ տրված տեղեկանքով և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

տեղակայումը՝ ..... մարզ, համայնք ....., տնկված .... թ. բերքատու կամ մշակվող տարածքը՝ ---------- հա:

4. Համաձայն սույն պայմանագրի Վաճառողը պարտավորվում է Գնորդին վաճառել, իսկ Գնորդը պարտավորվում է, Պայմանագրի գործողության ընթացքում Վաճառողից տարեկան գնել ..... տ ընդհանուր քանակության Ապրանք:

5. Գնորդին վաճառվող Ապրանքի քանակը՝ ըստ սորտերի կամ տեսակների կբաշխվի հետևյալ կերպ՝

1.	հա	տ	4.	հա	տ
2.	հա	տ	5.	հա	տ
3.	հա	տ	6.	հա	տ

Ընդամենը՝ ..... հա ..... տ

Գնորդը ընդունում է միայն սույն պայմանագրով նախատեսված սորտերի կամ տեսակների Ապրանք:

6. Յուրաքանչյուր պայմանագրային տարի, մինչև -------- ամսվա 1-ը Վաճառողը և Գնորդը կարող են փոփոխել 4-րդ և 5-րդ կետերում նշված Ապրանքի քանակը: Այդպիսի փոփոխությունները կատարվում են Կողմերի միջև գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մաս: Այն դեպքում, երբ Կողմերը չեն գալիս համաձայնության Ապրանքի քանակի վերաբերյալ, կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի լուծել սույն պայմանագիրը մյուս կողմին՝ գնումները սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ՝ գրավոր ծանուցելով դրա մասին:

7. Սույն պայմանագրով Գնորդը պարտավորվում է Ապրանքը գնել 14 և 15-րդ կետերում նշված գնով և ստորև բերված պայմաններով.

7.1. Ապրանքը պետք է հասունացած լինի և ունենա սույն պայմանագրի հավելվածով հաստատված որակական ցուցանիշները, որը հաստատում են պայմանագրի կողմերը,

7.2. Պայմանագրի 5-րդ կետում նշված տարբեր սորտերը կամ տեսակները պետք է մատակարարվեն առանձին կամ խառը կամ առանձին ---% այլ սորտերի պարունակությամբ,

7.3. Մատակարարվող Ապրանքը պետք է զերծ լինի օտար մարմիններից:

8. Սույն պայմանագրով նախատեսված ապրանքից պակաս կամ ավելի ապրանք մատակարարելու դեպքում՝ Գնորդի և Վաճառողի միջև հարաբերությունները կարգավորվում են՝

8.1. Եթե Վաճառողը սույն պայմանագրով որոշված ապրանքի քանակից պակաս է հանձնել գնորդին, գնորդը պարտավոր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով այդ մասին ծանուցել վաճառողին:

8.2. Գնորդի կողմից սույն պայմանագրում նշված քանակից ավելի ապրանք ընդունելու դեպքում՝ լրացուցիչ ընդունված ապրանքի համար վճարվում է նույն ապրանքի համար պայմանագրով սահմանված գնով, եթե այլ գին որոշված չէ կողմերի համաձայնությամբ:

3. Վաճառքի կարգը և փուլերը

9. Ապրանքը Գնորդին վաճառվում է Գնորդի ..... գնման տեղամասում: Ապրանքի գնման ժամկետները Վաճառողին կհայտնվի ոչ ուշ, քան գնման օրվանից 1 շաբաթ առաջ՝ նշված գնման տեղամասում համապատասխան տեղեկությունները փակցնելու և համացանցում համապատասխան հայտարարություն տեղադրելու միջոցով: Ապրանքի հանձնման ժամկետի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

10. Վաճառողի կողմից սահմանված մատակարարման ժամկետների խախտման դեպքում՝ Գնորդին իրավունք է վերապահվում մերժել Ապրանքը կամ 14-րդ կետի առաջին

նախադասությամբ սահմանված կարգով որոշված գնի նկատմամբ ավելի ցածր գին կիրառել: Այնուհանդերձ, գինը չի կարող ..... ՀՀ դրամ/կգ-ից ցածր լինել:

11. Գնորդի կողմից գնման սահմանված ժամկետները խախտելու կամ ապրանքից հրաժարվելու դեպքում Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են հետևյալ կերպ՝

Գնորդը պարտավոր է պատշաճ ձևով ընդունել իրեն հանձնված ապրանքը, բացառությամբ այն դեպքերի, երբ վաճառողը խախտել է պայմանագրով ամրագրված պարտականությունները կամ առկա է սույն պայմանգրի 20-րդ կետում նշված իրեն առնչվող դեպքերից մեկը:

Գնորդը պարտավոր է կատարել այնպիսի գործողություններ, որոնք ներկայացվող պահանջներին համապատասխան անհրաժեշտ են նրա կողմից համապատասխան ապրանք հանձնելը և ընդունելն ապահովելու համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, իրավական այլ ակտերով կամ սույն պայմանագրով:

Այն դեպքերում, երբ գնորդն օրենքի, իրավական այլ ակտերի կամ սույն պայմանագրի խախտմամբ չի ընդունել ապրանքը կամ հրաժարվել է այն ընդունելուց, Վաճառողն իրավունք ունի Գնորդից պահանջել ընդունելու ապրանքը կամ առաջնորդվելու սույն պայմանագրի 11-րդ կետով:

12. Ապրանքի մատակարարումը կարող է իրականացվել փուլերով, հետևյալ պայմաններով. մատակարարման օրեր՝ .....մատակարարումներ՝ .....:

13. Վաճառքի ընթացքում վաճառողը կներկայացնի իր ---------- ,
/անձնագիր, լիազորագիր, պետ. ռեգիստրի վկայական /

սույն պայմանագրի օրինակը և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվելու և մշակվող գյուղատնտեսական հողատեսքերի մասին տեղեկանք, եթե այդ փաստաթուղթը նախորդող մեկ տարվա ընթացքում ներկայացված չի եղել:

4. Գինը և վճարման կարգը

14. Ապրանքի գինը նշված կլինի Գնորդի կողմից բերքահավաքից առաջ և հաստատված կլինի վերջինիս կողմից: Գնորդը երաշխավորում է նվազագույնը .... ՀՀ դրամ/կգ գնման արժեք:

15. Ապրանքի գինը կարող է սահմանվել Ապրանքի 1կգ ֆիզիկական քաշի հաշվարկով կամ բազիսային շաքարայնությունից կամ չոր նյութերի պարունակությունից կախված՝ 1կգ-ի համար ֆիքսված գնին ավելացնելով .... դրամ՝ շաքարայնության կամ չոր նյութերի պարունակության բազիսային տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսի համար:

16. Վճարումը կիրականացվի կանխիկ կամ փոխանցումով՝ համապատասխան տարվա համար նախատեսված Ապրանքի ընդունումից հետո ..... օրացույցային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ Վաճառողի կողմից չեն ներկայացվում համապատասխան փաստաթղթեր, վճարումը կատարելու համար, կամ այդ փաստաթղթերը թերի են, սույն կետում նշված ժամկետի հաշվարկը սկսվում է փաստաթղթերի վերջնական փաթեթը ներկայացնելուց հետո:

5. Կողմերի պատասխանատվությունը

17. Սույն պայմանագրի 4-րդ և 5-րդ կետերում նշված Ապրանքի ընդհանուր քանակի առնվազն ---%-ը սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում համապատասխան տարում Գնորդին չվաճառելու դեպքում Գնորդն իրավունք ունի պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել ապրանքից և դրա համար վճարելուց: Եթե Գնորդը պահանջում է, իսկ Վաճառողը չի լրացնում ապրանքի պակաս հանձնված քանակը, ապա Գնորդը իրավունք ունի լուծել պայմանագիրը և պահանջել վճարել տուգանք ապրանքի պակաս հանձնված քանակի արժեքի ---%-ի չափով:

18. Վաճառողի կողմից տրամադրված ապրանքն ընդունելուց հրաժարվելու կամ դրա ընդունումն ուշացնելու համար Գնորդը Վաճառողին վճարում է տուգանք՝ չընդունված կամ ուշացումով ընդունված ապրանքի արժեքի ---%-ի չափով և հատուցում է ապրանքի տեղափոխման ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կրած կորուստները:

19. Պայմանագրի 16-րդ կետով սահմանված ժամկետում Գնորդի կողմից Ապրանքի լրիվ արժեքը չվճարելու դեպքում՝ Վաճառողն իրավունք ունի պահանջել տույժ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար չվճարված գումարի ---%-ի չափով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ)

20. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, կարկտահարությունը, ցրտահարությունը, ջրհեղեղը, հրդեհը և բնական այլ աղետները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

21. Գնորդը կարող է Վաճառողին տրամադրել ագրոտեխնիկական խորհրդատվություն, կանխավճար կամ բերքի մշակության համար անհրաժեշտ այլ ապրանք (սերմ, բուժանյութ, վառելանյութ, պարարտանյութ և այլն):

22. Տրամադրված կանխավճարը կամ ապրանքի արժեքը մարվում է (հաշվանցվում է) բերքի գնման ժամանակ:

23. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

24. Սույն պայմանագրի լուծումը կամ ցանկացած փոփոխություն կատարվում է Կողմերի միջև գրավոր փաստաթուղթ ստորագրելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

25. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և դադարում է պայմանագրային պարտավորությունների կատարմամբ կամ ՀՀ քաղաքացիկական օրենսգրքով սահմանված պարտավորությունների դադարման հիմքերով:

26. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, ---------- օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
_____	_____
(Ընկերության անվանումը և գտնվելու վայրը) .	Անուն, ազգանուն, հայրանուն (Ընկերության անվանումը) ..... (Վաճառողի հաշվի համարը)